ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 67

«12» 09 2022 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 44 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարապետ Համբարձումյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 20.07.2022թ. N 251-Ա հրամանը, Ազատ Մարգարյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 16.08.2022թ. N 298-Ա հրամանը, Հայկ Հովհաննիսյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 19.08.2022թ. N 299-Ա հրամանը, Գայանե Գասպարյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 31.08.2022թ. N 310-Ա հրամանը, Կարեն Կարապետյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 09.09.2022թ. N 327-Ա հրամանը, ելնելով Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, աշխատանքի հավասարաչափ բաժանում և ծանրաբեռնվածություն ապահովելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների և գլխավոր դատախազության ավագ դատախազների միջև աշխատանքի բաժանում կատարելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 10-ի N 28 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 44

հրամանի (այսուհետ՝ Հրաման) անվանման մեջ «ավագ դատախազների» բառերից հետո ավելացնել «դատախազների» բառերը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հրամանի 6-րդ կետը:

3. Հրամանի 8-րդ կետում՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ Գայանե Գասպարյանը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազ Հայկ Հովհաննիսյանը» բառերով, իսկ գ. ենթակետը ճանաչել ուժը կորցրած:

4. Հրամանի 9-րդ կետում՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազ Ազատ Մարգարյանը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազ Կարապետ Համբարձումյանը» բառերով:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ